Արձանագրություն N 2

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05.03. 2019 թ.
Ժամ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս .Մաքսապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Հարությունյան, Ա. Հազարապետյան, Բ. Տեր-Թովմասյան
Բացակայում է Խ.Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ս .Մաքսապետյան)

1.1 «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1	Ա/Ձ Սիրանուշ Հովհաննիսյան
2	Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյան
3	ԷԿՈ ՊԱՐԿ ՍՊԸ
4	ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ ՍՊԸ
5	Պստո ՍՊԸ

2.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ս .Մաքսապետյան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակիցների անվանումները				
		Ա/Ձ Սիրանուշ Հովհաննիսյան	Ֆ/Ա Դերենիկ Հովհաննիսյան	ԷԿՈ ՊԱՐԿ ՍՊԸ	ՋԻՋԻ ՆԱՏՈՒՐԱԼՍ ՍՊԸ	Պստո ՍՊԸ
		առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Ոսկեգույն թույաների /կիպարիս/	3850000	3850000	7700000	4690000	9870000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

3.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ս .Մաքսապետյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

3.2 Հիմք ընդունելով, որ Ա/Ձ Սիրանուշ Հովհաննիսյանի հայտը չի համապատասխանում հրավերի 7.19 կետի պահանջներին, այն է՝ գնային առաջարկը վավերացված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշեց մերժել Ա/Ձ Սիրանուշ Հովհաննիսյանի հայտը

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Ընթացակարգի շրջանակներում բանակցությունների անցկացման մասին

(Ս .Մաքսապետյան)

4.1 Գանահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերությունը, համաձայն որի՝ հայտերի բացման նիստում՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի **15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա.** որոշեց նիստը կասեցնել, և հանձնարարել գնման ընթացակարգի քարտուղարին մեկ աշխատանքային օրվա ընթացքում բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս .Մաքսապետյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2019 թվականի մարտի 11-ին ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ, 321/1 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0

Հանձնաժողովի նախագահ՝		Ս.Մաքսապետյան
		Հ.Հարությունյան
		Ա.Հազարապետյան
		Բ.Տեր-Թովմասյան
Համակարգող՝		Վ. Մեժունց